



Տօնե՛նք Քրիստոնէական Եկեղեցւոյ Ծնունդը

Մայիս ամսուայ բոլոր տօներն ալ հիմնուած են Քրիստոնէական Եկեղեցւոյ ծննդեան վրայ: Կարելի չէ Հայոց ազգային պատմութիւնն ու եկեղեցւոյ պատմութիւնը իրարմէ անջատել, մէկը առանց միւսին՝ ըմբռնել: Անոնց իրարմէ բաժանումը երկուքն ալ կործանման կ'առաջնորդէ:

Հոգեւոր Հովիւին ե-նամակի հասցէն՝ > derkarnig@sourphagop.com

Ձրի բաժանորդագրման համար՝ > newsletter07@sourphagop.com

Մեզի ֆեյս Կապ պահելու համար՝ > eglise58@sourphagop.com

sourphagop.org/newsletter/newsletter.htm

Ս. ՅԱԿՈՒԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Տեղեկատու

Քուէարկեցէ՛ք

Շնորհակալութեամբ ստացանք Տեղեկատուի համար ձեր առաջարկած անունները: Քուէարկելու համար տեսէք երրակեզու էջը:



Ա. ՏԱՐԻ | ԹԻԻ 3 | ՄԱՅԻՍ 2007

3401 OLIVAR ASSELIN, MONTRÉAL (QUÉBEC) H4J 1L5 CANADA | 514-331-5445

ՏՕՆ Ս. ԽԱԶԻ ԵՐԵՒՄԱՆ՝

Կիրակի 6 Մայիս 2007



Խաչ, Մասունքով 1746 Կասպորական

Ս. Խաչի Երեւանն տօնը, որ Հայ եկեղեցին կը կատարէ Յիմունքի 5-րդ Կիրակի օրը, կը յիշատակէ հետեւեալ դէպքը- 351 թուականի Մայիս 7-ին, երբ Երուսաղէմի եպիսկոպոսն էր Կիրեոզ եւ Հռոմի կայսրն էր Մեծն Կոստանդիանոսի որդին՝ Կոստանդին, Հոգեգալստեան տօնին օրը՝ ցերեկով Գողգոթայէն Ջիթենեաց լեռ տարածութեան երկինքին՝ Ս. Խաչին նշանը կ'երեւնայ, աւելի փայլուն քան արեւուն լոյսը: Այդ առիթով Կիրեոզ եպիսկոպոս նամակ մը կը գրէ Կոստանդին կայսրին, որ համակիր էր Նիկիոյ ժողովով դատաւարտուած արիոսականութեան (arianism), ու անոր կը յիշեցնէ իր հօր՝ Կոստանդիանոսի պաշտպանած դաւանանքը՝ իբր ուղղափառ, եւ գայն նշմարիտ հաստատելու մէջ վերհաստատուելու կը հրակրէ: Կիրեոզ եպիսկոպոս Ս. Խաչին երեւումը կը մեկնաբանէ որպէս աստուածային վկայութիւն՝ թէ Յիսուս Աստուծոյ Միածին Որդին է:

ՏՕՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ՝

Հինգշաբթի 17 Մայիս 2007

Այս տօնը կը յիշատակէ Յիսուսի երկինք ելլելը: Նոր կտակարանին մէջ 2 տեղ Յիսուսի համբարձումը նկարագրուած է (Ղուկաս 24.50-52 եւ Առաքեալներու Գործեր 1.6-11): Ղուկաս աւետարանիչ այսպէս գրած է. «Ապա տարաւ գանձնիք (այսինքն՝ 11 աշակերտները) մինչեւ Բեթանիա եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ օրհնեց գանձնիք: Եւ մինչ կ'օրհնէր, բաժնուեցաւ անոնցմէ, դէպի երկինք բարձրանալով: Անոնք երկրպագեցին Յիսուսի եւ մեծ ուրախութեամբ վերադարձան Երուսաղէմ»:



Տօնին շարականը կ'ըսէ «Մեր Տէրը երկինք համբարձաւ աշակերտներուն ըսելով՝ նստէ՛ք այդ ֆաղափին՝ Երուսաղէմի մէջ, մինչեւ որ երկինքէն փառօքիւն հագնիք...»: Իսկ թէ երկինքէն մէջ ի՞նչ եղաւ: Շարականը կ'ըսէ. «Երկինք մտաւ հրեշտակներու թիւաւոր զօրքերու բազմութեամբ, որոնք բարձրաձայն կը գոչէին եւ կ'ըսէին. Օրհնեալ է ան՝ որ Տիրոջ անունով կու գայ: ծնողին աջ կողմը նստաւ...»:

ՏՕՆ ՀՈԳԵԳԱՆԱՍՏԵԱՆ՝

Կիրակի 27 Մայիս 2007



Հոգեգալստեան տօնին միւս անունն է Պենտեկոստէ, որ յունարէն բառ մըն է եւ կը նշանակէ յիսուն: Պենտեկոստէ անունը տրուած է որովհետեւ այս տօնը Ջատիկէն յիսուն օրեր ետք կ'ըլլայ: Հոգեգալստը, ինչպէս Թորգոմ Արք. Գուշակեան գրած է՝ լրումն է Յարութեան տօնական շրջանին: Այս տօնը կը յիշատակէ այն կարեւոր դէպքը, որ կը կարդանք Առաքեալներու Գործերը գիրքի 2.1-42ի մէջ: Այնտեղ Նկարագրուած է Սուրբ Հոգիին գալը եւ բաշխուիլը «բոլոր հաւատացեալներ»ուն մէջ՝ իբր «հրեղէն լեզուներ»: Այս փորձառութեան վրայ, Քրիստոսի հաւատացողները ֆառօքիւնը ունեցան Աւետարանը ֆարագելու. եւ «Տէրը օրէ օր եկեղեցիին մէջ փրկութեամբ թիւը կ'անցնէր» (ԱԳ 2.47): Հոգեգալստը եկեղեցւոյ հաստատման դէպքն է: Հոգեգալստի շարականին երեք լեզուներով թարգմանութիւնը կրնա գտնել այս թիւին մէջ. կարդա՛:

ՆՈՐ ՂԵՒՈՆԴ ԵՐԵՑԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ



Հայ ժողովուրդի արդի պատմութեան մէջ շատ կարեւոր թուական մըն է 28 Մայիս 1918-ը: Բազում դարերու գերութեան տեղ հալոյթիւնը իր անկախութիւնը վերակերտեց Աստուծոյ օգնութեամբ եւ անսահման զոհողութիւններով: Այդ թուականը սերտօրէն կապուած է Սարդարապատի ճակատամարտին: Եւ այդ ճակատամարտին ներշնչիչ դէմքերէն մէկը եղաւ Գարեգին Եպիսկոպոս Յովսէփեանց: Սիմոն Վրացեան իր «Հայաստանի հանրապետութիւն» հոսքի հատորին մէջ գայն կոչած է «նոր ժամանակների Ղեւոնդ Երեց»:

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ Ե՛ՐԲ ՊԷՏՔ Է ԽԱՉԱԿԻՔԵՆՔ ԵՒ ԻՆՉՈՒ՛՛:

Ս. Պատարագի ընթացքին խաչակնքելու տեսական առիթներ կան, օրինակ. երբ պատարագիչ քահանան կ'օրհնէ ժողովուրդը, «Հայր Մեր»էն առաջ ն վերջ, ամէն անգամ որ Յիսուս Քրիստոսի եւ Ս. Երրորդութեան անունները յիշուին, եւայլն...:

Ս. Խաչը փրկարար նշան է: Ս. Խաչը մեր զօրութիւնն է: Հաւատքով խաչակնքումը չարին դէմ կ'ընք է: Կը խաչակնքենք օգտուելու համար Աստուծոյ մեզի տրամադրած պաշտպանութեան:

HYMNE DE PENTECÔTE

La colombe expédiée des cieux,
À la voix retentissante et descendant tel l'éclair,
A armé les disciples par le feu sans les brûler,
Alors qu'ils étaient assis dans le grenier.

La colombe immatérielle,
L'insondable qui s'agite dans la pensée la plus
profonde de Dieu,
S'inspirant du Père, relate le redoutable
Et second avènement du Christ.
Il a été prêché à son sujet: «Il est consubstantiel
au Père».

Que l'Esprit Saint soit béni jusqu'aux cieux,
Lui qui provient du Père:
Les apôtres se sont enivrés de sa coupe immortelle,
Et ils ont invité la terre à rejoindre le ciel.

HYMN OF PENTECOST

The dove sent down from on high,
Descending with a very powerful sound and like
sparkling thunderbolt,
Fortified the disciples by fire without burning them
While they were sitting at the upper chamber.

The immaterial dove, who is inscrutable,
He who strolls in the deepest mind of God,
Taking from the Father
Tells us about the awesome
second coming of Christ.
He has been confessed as consubstantial
with the Father.

Glory in the highest
To the Holy Spirit who proceeds from the Father.
The apostles got inebriated with the
cup of immortality,
And invited the earth to heaven.

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻ ՇԱՐԱԿԱՆ

Երկինքէն առաձուած աղանին
Հօրաձայն ու փայլակի նման իջնելով
աշակերանները առանց այրելու հրագինեց,
երբ անոնք վերնատան մէջ կը նստէին:

Աննիթական աղանին,
անճննելի՛ն՝ որ Աստուծոյ խորագոյն մտփին
մէջ կը յաճի,
Հօրմէն առնելով՝ (Քրիստոսի) ահաւոր եւ
երկրորդ գալուստը կը պատմէ:
Անոր մասին «Հօր համագոյակից է»
ֆարոգեցին:

Մինչեւ երկինք օրհնութիւն՝ Հօրմէ ելլող
Սուրբ Հոգիին.
առաձայնները անոր անմահական բաժակով
արբեցան,
եւ երկիրը երկինք հրախրեցին:

mayisian ՄԱՅԻՍԵԱՆ

WHY THE ARMENIAN CHURCH? IT HAS BEEN SAID...

"The church is our essence... If you take the church out of our history, what else will we be left with?"

Take away the fact that we have been the first nation to adopt Christianity; or the fact that it was the Church that created our alphabet; or that the first book ever written in the Armenian language was the Bible in the fifth century.

Remove from our history the evidence that our literature is inspired by the Christian experience and thinking; remove all the churches built throughout the centuries. What will be left of our culture?

Or take away our architecture, our liturgy, our cross stones, the manuscripts and miniature illuminations, and, what else shall we have to offer to the world? Our armies? Our victories? Our economic power? Where and when did we have them?....

Only moral values will make us great. We have not ruled by our economy, nor by the politics of our kingdoms. Whatever we have been, we have been by our spiritual values and our culture.

Our church has always been the force that tutored and strengthened our soul and led us to victory."

"An ancient proverb says: "From the fires of the past, carry the flames not the ashes." In this sense the past may turn into a force that may lead the young generation to a new conscientiousness of their identity as the torchbearers of the living and life giving flame of the Christian faith which has proven indomitable all along the past twenty centuries.

The young are not only the inheritors, but the torchbearers, a generation not to look backward to the past for a sort of consolation or empty pride, but forward with new vigor and vision for greater achievements, to carry on forward the flame that gave life to their forefathers."

"The traditions of a nation are the cementing elements of it's identity. When they are ignored, forgotten or despised, the face of that nation loses its colour, it becomes distorted and eventually it's identity is tarnished and lost forever. Traditions serve as anchors for strength and durability. Take them away from the life of a people and the people will shake like reeds without roots and fall like leaves severed from a tree..."

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԸ

Վերստին Ծնունդ եւ Դարձ

Ի՞նչ է վերստին ծնունդը եւ ի՞նչ է դարձը: Վերստին ծնունդը, որ նաեւ վերէն կամ երկինքէն ծնունդ կը նշանակէ, մարդ էակի կեանքին մէջ այն արմատական փոփոխութիւնն է, որով ան Քրիստոսի աշակերտ կ'ըլլայ: Իսկ դարձը այն արարքն է, որով կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ Աստուծմէ հեռացած անձը խոր զոյժումով մը ետ եւ վերջնականօրէն կը դառնայ Անոր (իշել Անառակ որդիին առակը):

Մկրտութեան խորհուրդը վերստին ծննդեան խորհրդանշական արտայայտութիւնն է: Ըստ Եկեղեցւոյ հաւատքին, մկրտողը ենթական, անկա փոքրիկ ըլլալ, թէ մեծ՝ Աստուծմէ կանչուած մըն է: Կրնայ ան զանազան պատճառներով հեռանալ Աստուծմէ, սակայն այն օրը՝ որ խորապէս կը զոյժայ եւ կը դառնայ Աստուծոյ՝ վերստին կը լսէ Անոր ձայնը, որովհետեւ զոյժումով իր հոգիին ականջները բացուած են: Վերջին դարուն

ճոր թիրիմացութիւն մըն է առ Աստուած վերջնականօրէն դարձը «վերստին ծնունդ» կոչել: Ըստ Եկեղեցւոյ, մկրտուածները վերստին չեն ծնիր, որովհետեւ ծնած են արդէն. անոնք դարձ կրնան ունենալ՝ եթէ իրենց ճամբէն շեղելով հեռացած են: Իսկ անոնք որ չեն մկրտուած եւ Քրիստոսի կը հաւատան օր մը վերստին կը ծնին:

ԳՔ

Nommez le Bulletin –
Votez maintenant!

Transmettez-nous, par courriel ou par téléphone, seulement un choix de la liste: une vote par personne.
Délai : jeudi le 24 mai 2007.
Pour des raisons pratiques, nous avons éliminé quelques noms suggérés. Si vous voulez en savoir plus, veuillez nous contacter.

Name the Newsletter –
Vote Now!

Send us your selection by email or by phone. Only one selection per person.
Deadline: Thursday, May 24, 2007.
For reasons of practicality some suggested names had to be eliminated. If you require more information on this, please don't hesitate to contact us.

Քուէարկէ հիմա՛

Ցանկէն միակ ընտրութիւնը յայտնէ մեզի ե-նամակով կամ հեռախօսով. իրաբանշիւր անձ՝ մէկ քուէ: Ժամկէտ՝ Հինգ. 24, Մայիս 2007: Առաջարկուած որոշ անուններ, գործնական պատճառներով, դուրս ձգուած են ցանկէն: Մանրամասնութեան համար կրնաս կապուիլ մեզ հետ:

LATIN SPELLING	ARMENIAN SPELLING
AMEN	ԱՄԷՆ
AVEDIS	ԱՒԵՏԻՍ
HOUSAPER	ՅՈՒՍԱՔԵՐ
AKHTAMAR	ԱԽԹԱՄԱՐ
HAY HOKI	ՀԱՅ ՀՈԳԻ
MENK MEZI	ՄԵՆՔ ՄԵՅԻ
GANTEGH	ԿԱՆԹԵՂ
HAYDNOUTIOUN	ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ